# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 2. | Աշխատանքի անվանումը | Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի 1-ին փողոցի և կենտրոնական հրապարակի վերակառուցում |
| 3. | Ընդհանուր նկարագրություն | ➢ Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի 1-ին փողոցի և կենտրոնական հրապարակի վերակառուցում<br>➢ Հասցե 'ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնք գյուղ Վարդանիձոր<br>➢ 1-ին փողոցի մակերեսը՝ 0,3323 հա<br>➢ կենտրոնական հրապարակի մակերեսը՝ 0,051 հա<br>➢ Նախկինում չի կատարվել հիմնանորոգման աշխատանքներ |
| 4. | Ներկայացվող հիմնական պահանջներ, տեխնիկական առաջադրանք | Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի 1-ին փողոցի և կենտրոնական հրապարակի վերակառուցում<br>Քանդման աշխատանքներ<br>-եզրաքարերի քանդում<br>-առկա հին ասֆալտի և բետոնի քանդում<br><br>Վերակառուցման աշխատանքներ<br>- Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի 1-ին փողոցի և մայթի սալարկում կոտրված գրանիտե քարերով ոչ պակաս քան 10 սմ բարձրությամբ, իսկ ցեմենտոբետոնե հիմքը 15 սմ, ճանապարհի լայն հատվածներում իրականացնել երկկողմանի մայթերի, իսկ նեղ հատվածներում իրականացնել միակողմանի մինիմալ (0.8 մ) մայթի կառուցում սալարկումով (ծածկույթի նյութի ընտրությունը համաձայնեցվում է պատվիրատուի հետ) և բազալտե եզրաքարերով,<br>-առկա ջրահեռացման համակագերի վերանորոգում և նորի կառուցում<br>Առկա գիշերային լուսվորության վերատեղադրում, բացակայության դեպքում նորի տեղադրում ստորգետնյա էլեկտրամատակարարման եղանակով<br>Փողոցի կահավորում երթևեկության նշաններով |
| 5. | Ընդհանուր դրույթներ | Աշխատանքային նախագիծը կազմվում է՝<br>ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան, ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան:<br>Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ՝ ,,,,, հազ. դրամ նախահաշվային արժեքով՝ նախագծողի և փորձաքննություն իրականացնողի միջև կնքված պայմանագրի համաձայն:<br>Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում:<br>ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝<br>ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,<br>բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,<br>գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,<br>դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակներով,<br>ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%):<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝<br>**-Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է<br>Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր //հատակագիծ /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն/, |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

| | | |
|---|---|---|
| | | տեխնիկական բնութագիր,ճարտարապետահատակագծային առաջադրանք,լիցենզիա /քաղաքաշինական փաստաթղթերի մշակման բնագավառ՝ բնակելի,հասարակական և արտադրական ոլորտ/,տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/,ընդհանուր բացատրագիր, հատակագծեր,շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր,հիմնական շինարարական նյութերի,կոնստրուկցիաների ամփոփագրեր,մասնագրեր,աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր,<br>-**Նախահաշվային մաս**՝ ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ<br>Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ:<br>Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի: |
| | ***Հիմնական պարտականություններ և պահանջներ*** | ***Հիմնական պարտականություններ***՝<br>1.հետազննման աշխատանքների իրականացում,<br>2.նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում,<br>***Հետազննման վերաբերյալ պահանջներ***՝<br>• հետազննում իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,<br>• հետազննման ընթացքում իրականացնել Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի 1-ին փողոցի և կենտրոնական հրապարակի և մայթերի տարածքի առկա վիճակի տեսանկարահանում:<br>***Նախագծի նկատմամբ պահանջներ***<br>• Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին:<br>• Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝<br>***Համաձայնեցումներ***՝<br>• քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,<br>• նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ,<br>• տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել շինարարական աղբի տեղերը |
| | ***Նորմատիվային պահանջներ*** | • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:<br>• Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի: |

Կազմող

Մկրտիչ Մկրտչյան

Մեղրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝

Բագրատ Զաքարյան

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ